ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկդ-3, շ-12, 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՆԻՍՏ ԹԻՎ 6

02 հոկտեմբերի 2020 թվականի

Սույն թվականի հոկտեմբերի 2-ին տեղի ունեցավ Նորաշեն համայնքի ավագանու հերթական նիստ, որին մասնակցում էին համայնքի ավագանու 5 անդամներից 5-ը՝ Պ.Ավագյան, Ա.Գրիգորյան, Խ.Հակոբյան, Ռ.Սահակյան, Ա.Սարիբեկյան, համայնքի բնակիչներ և համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Վ.Դավթյանը: Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գառնիկ Գասպարյանը, քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար՝ Գոռ Մանուկյանի:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.2020 թվականի իննը ամսվա կտրվածքով Նորաշեն համայնքի բյուջեում նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման և կատարված ծախսերի վերաբերյալ հաղորդումներ: / Զեկ.Վ.Դավթյան /

2.Նորաշեն համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին: / Զեկ.Վ.Դավթյան /

3.Հայաստանի Հանրապետությունում հաստատված ռազմական դրությամբ պայմանավորված՝ Նորաշեն համայնքից Արցախի Հանրապետություն զորակոչված ժամկետային զինծառայողների, ռազմաճակատ մեկնած պահեստազորայինների, և Արցախի Հանրապետությունից տեղահանված ու Նորաշեն համայնքում ապաստանած ընտանիքներին օժանդակություն ցուցաբերելու մասին: / Զեկ.Գ.Գասպարյան/

Արձանագրող.

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկդ-3, շ-12, 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 24-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 02.10.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Նորաշեն համայնքի ավագանու 02.10.2020 թվականի թիվ 6 հերթական նիստի օրակարգը.

1.2020 թվականի իննը ամսվա կտրվածքով Նորաշեն համայնքի բյուջեում նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման և կատարված ծախսերի վերաբերյալ հաղորդումներ: / Զեկ.Վ.Դավթյան /

2.Նորաշեն համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին: / Զեկ.Վ.Դավթյան /

3.Հայաստանի Հանրապետությունում հաստատված ռազմական դրությամբ պայմանավորված ՝ Նորաշեն համայնքից Արցախի Հանրապետություն զորակոչված ժամկետային զինծառայողների, ռազմաճակատ մեկնած պահեստազորայինների, և Արցախի Հանրապետությունից տեղահանված ու Նորաշեն համայնքում ապաստանած ընտանիքներին օժանդակություն ցուցաբերելու մասին: / Զեկ.Գ.Գասպարյան/

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՊԱՊԻՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԼԱՆԴ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկղ-3, շ-12, ☎ 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

02 ՀՈկտեմբերի 2020 թվականի N25-Ն

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆԸ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի1-ին մասի 6-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն համայնքի 2020 թվականի տեղական բյուջեի ինը ամսվա կտրվածքով հաշվետվության մասին հաղորդումը /կից ներկայացվում է հավելված 1 /:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՊԱՊԻՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԼԱՆԴ ՍԱՀԱԿԱՅՆ

ԱՐԿԱԴԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված 1

Նորաշեն համայնքի ավագանու

02.10.2020թ. N25-Ն որոշման

2020թ.ինը ամսվա կտրվածքով համայնքի վարչական բյուջեի մուտքերը կազմել են 9296.3հազ. դրամ,նախատեսված 13113.6 հազ.դրամի դիմաց, կատարողականը- 70.7%:

Հողի հարկ՝ 1020.0հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 1021.8հազ.դրամ՝ 100.1%

Գույքահարկ՝ 1035.0հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 1048.2 հազ դրամ՝ 101.3%

Տեղական տուրքեր՝ 44.0 հազ. դրամի դիմաց հավաքագրվելէ 123.0հազ.դրամ՝ 279.6%

Հողի վարձավճար՝ 980.8հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 505.2 հազ.դրամ՝51.5 %

Աղբահանության վճարներ՝ նախատ. 400.0 հազ.դրամ, հավաքագրվել է 183.6հազ. դ. 46%

Այլ եկամուտներ՝ նախատեսված- 75.6հազ.դրամ կատարվել է 86.6հազ.դրամ 114.5%

Դոտացիա՝6338.5հազ.դրամի դիմաց կատարվել է 6338.5 հազ. դրամ՝ 100 %

Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ՝ նախատեսված 3555.4հազ.դրամի դիմաց կատարվել է 2968.4 հազ.դրամ 83.5% :

Ծախսեր՝

1.Աշխատավարձ՝..... 5405.4հազ.դրամ

2.Կապի ծառայություն՝..... 90.0 հազ.դրամ

3.Էներգետիկ ծառայություն՝..... 692.9 հազ.դրամ

4.Տրանսպորտային նյութեր՝..... 514.3 հազ.դրամ

5.Շենք շինութ. ընթացիկ նորոգում ... . 432.0 հազ.դրամ

6.Համակարգչային ծառայություններ ..... 10.8 հազ.դրամ

7.Սուբսիդիա հեռուստաընկերություններին՝..... 100.0 հազ.դրամ

8.Հուղարկավորության նպաստներ..... 150.0 հազ.դրամ

9.Բանկային ծառայություններ..... 10.6 հազ.դրամ

10.աղբահանության ծառայություն..... 175.8 հազ.դրամ

11.Գարասենյակային նյութեր..... 118.6 հազ.դրամ

12.հատուկ նպատակային նյութեր..... 59.2 հազ.դրամ

13. Տեղեկատվ.ծառայություններ..... 33.0 հազ.դրամ

14.Մասնագիտակ.ծառայություններ..... 14.5 հազ.դրամ

15.Դրամական օգնություն 40.0հազ.դրամ

Ընդամենը՝ ..... 7847.0 հազ.դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկղ-3, շ-12, ☎ 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N26-Ն

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Նորաշեն համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Ընդ. Բնույթի հանրային ծառայություններ բաժին 01 խումբ 06 դաս 01 ծրագիր 51 հոդված 4824/ պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ կիրառվող տույժեր/ պակասեցնել 934.9 հազ.դրամով և հաստատել 0 դրամ:
բ)Սոցիալական նպաստներ բաժին 10 խումբ 7 դաս 1 հոդված 4729 / դրամական օգնություն / ավելացնել 934.9 հազ.դրամով և հաստատել 974.9 հազ.դրամ:

2.Հանձնարարել համայնքապետարանի ֆինանսական ծառայությանը կազմել բյուջեի փոփոխման համապատասխան փաստաթղթերը և ներկայացնել Գեղարքունիքի մարզպետարան :

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՊԱՊԻՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԼԱՆԴ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ.Նորաշեն փ-4,փկղ-3, շ-12, ☎ 093222994 , norashen.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

02 ՀՈկտեմբերի 2020 թվականի N27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱԿՈՉՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ՌԱԶՄԱՃԱԿԱՏ ՄԵԿՆԱԾ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՈՒ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով՝ ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, և հաշվի առնելով՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հայտարարված պատերազմական դրությունից բխող իրավիճակը, համայնքի ավագանին քննության է առնում համայնքում առաջացած որոշակի խնդիրներ, որոնք վերաբերվում են Նորաշեն համայնքից Արցախի Հանրապետություն զորակոչված ժամկետային զինծառայողների, ռազմաճակատ մեկնած պահեստազորայինների և Արցախի Հանրապետությունից տեղահանված ու Նորաշեն համայնքում ապաստանած ընտանիքներին օգնություն ցուցաբերելու , հնարավորության սահմաններում սոցիալական աջակցություն հատկացնելուն:Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքից Արցախի Հանրապետությունում կան ժամկետային զինծառայողներ, ինչպես նաև Արցախի ռազմաճակատ են մեկնում մոբիլիզացիոն ցուցակներում ընդգրկված պահեստազորայիններ, որոնց ընտանիքները ունեն սոցիալական աջակցության կարիք:Համայնքում բնակություն են հաստատել Արցախի Հանրապետությունից տեղահանված ընտանիքներ, որոնք բնակվում են իրենց հարազատների տանը: Տվյալ ընտանիքներին ևս, հնարավորության սահմաններում պետք է ցուցաբերվի օգնություն: Ելնելով առկա իրողությունից, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն. Նորաշեն համայնքի 2020 թվականի բյուջեի միջոցների հաշվին՝ Նորաշեն համայնքից Արցախի Հանրապետություն զորակոչված ժամկետային զինծառայողների, ռազմաճակատ մեկնած պահեստազորայինների և Արցախի Հանրապետությունից տեղահանված ու Նորաշեն համայնքում բնակություն հաստատած ընտանիքներին հատկացնել ֆինանսական օգնություն:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՊԱՊԻՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԼԱՆԴ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Նորաշեն համայնքի ղեկավար ԳԱՌՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ